ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հաշվետվություն

2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գյուտեր եւ օգտակար մոդելներ 4

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ 6

Ֆիրմային անվանումներ.....10

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 10

Լիցենզային եւ զիջման մասին պայմանագրերի գրանցում 12

Իրավական դաշտ 13

Միջազգային համագործակցություն 13

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
Գոհար ԱՂԱՄՅԱՆ

Դիզայն եւ էջատում Նաիրա ԶԵՅՐԱՆՅԱՆ

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2007թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաեւ պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Միեւնույն ժամանակ ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը եւ բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես իրավական դաշտի կատարելագործմանը, ինչն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. գործունեության կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում. մշակվել եւ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացված նաեւ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը կփոխարինի «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2007թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 130 գյուտի եւ 17 օգտակար մոդելի հայտ, որոնցից 140-ը՝ ազգային հայտատուներից, 7-ը՝ օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 2716:

Աղյուսակ 1

Երկիրը	2006	2007
Հայաստան	213	140
Այլ երկրներ	1	7
Ընդամենը	**214**	**147**

2006թ. համեմատությամբ 2007թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը նվազել է 67-ով կամ 31,3 %-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 72-ով կամ 33.8 %-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 5-ով կամ 6 անգամ:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ժնեւ) ներկայացվող միջազգային եւ Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2007թ. գործակալությունը ստացել է 3 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2007թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 49 միջազգային հայտ:

2007թ. գործակալությունը ստացել է 2 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվա-

կանը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն :

Այսպիսով, 1997-2007թ.թ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 13 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում 126 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն եւ որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 178 հայտով, ընդ որում՝

- 152 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին,
- 14 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին,
- 9 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը հետ կանչելու մասին,
- 3 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը հետ կանչելու մասին:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2007թ. ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ.2-ում՝ գրաֆիկի տեսքով:

2007թ. տրվել է գյուտի 165 արտոնագիր եւ օգտակար մոդելի 11 արտոնագիր:

Գյուտի Հայաստանի Հանրապետության 2061 արտոնագրերից 2007թ. տվյալներով Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 433-ը, օգտակար մոդելի 138 արտոնագրերից՝ 54-ը:

2007թ. տվյալներով Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3004 Եվրասիական արտոնագրեր:



Նկ. 1



A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Նկ. 2

ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2007թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1477 հայտ (որոնցից 882-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ:

Ապրանքային նշանների 1450 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 60 հայտեր, իսկ 80 հայտով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1164 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 672-ը՝ ազգային հայտատուների անունով), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 1 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, եւ կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3219 ծանուցում:

Միջազգային ծանուցումներով կայացվել է 2477 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ: Նախնական մերժման մասին կայացվել է 403 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 420:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 10 հայտ:

2006 թ. համեմատությամբ 2007 թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ 945-ի դիմաց (2006թ.) 882 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով՝ 494- ի դիմաց (2006թ.) 595 հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալությունն է ներկայացվել 18 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 7-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 1-ը՝ Հունգարիայից, 1-ը՝ Բրազիլիայից, 4-ը՝ Շվեյցարիայից, 1-ը՝ Ավստրիայից, 3-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից): Դրանցից 8-ը ստացել են արտոնագիր, 3-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին:

2006 թ. համեմատությամբ ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ ազգայինը՝ 14-ի դիմաց (2006թ.) 7 հայտ եւ օտարերկրյա հայտատուներինը՝ 15–ի դիմաց (2006թ.) 11 հայտ:

2007թ. տրվել է արդյունաբերական նմուշի 25 արտոնագիր:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրանկիցարձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	882	-	882
ԱՄՆ	153	149	302
Ավստրալիա	-	2	2
Ավստրիա	1	44	45
Արաբական Միացյալ Ամիրայություններ	7	-	7
Բելառուս	-	19	19
Բենիլյուքս	-	202	202
Բուլղարիա	2	48	50
Գերմանիա	80	427	507
Դանիա	1	21	22
Էստոնիա	-	3	3
Թուրքիա	2	95	97
Իռլանդիա	1	20	21
Իսլանդիա	-	46	46
Իսպանիա	-	62	62
Իտալիա	5	213	218
Իրան	3	8	11
Լատվիա	1	27	28
Լեհաստան	1	57	58
Լիխտենշտայն	16	26	42
Լյուքսեմբուրգ	1	-	1
Կիպրոս	3	-	3
Կորեայի Հանրապետություն	21	8	29
Հնդկաստան	4	-	4
Հորվաթիա	-	10	10
Հունաստան	-	13	13
Հունգարիա	-	309	309

Ճապոնիա	18	37	55
Միացյալ Թագավորություն	78	58	136
Մոլդովայի Հանրապետություն	-	10	10
Ներքին շուկայի ներդաշնակման գերատեսչություն (ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ)	-	109	109
Նիդեռլանդներ	4	1	5
Նորվեգիա	-	6	6
Շվեդիա	-	8	8
Շվեյցարիա	65	300	365
Չեխիա	1	23	24
Չինաստան	12	118	130
Պորտուգալիա	-	5	5
Ռումինիա	-	8	8
Ռուսաստանի Դաշնություն	53	332	385
Սերբիայի Հանրապետություն	-	8	8
Սիրիայի Արաբական Հանրապետություն	1	1	2
Սլովակիա	-	9	9
Սլովենիա	-	35	35
Վիրջինյան կղզիներ	5	-	5
Վրաստան	9	17	26
Ուկրաինա	26	23	49
Ֆինլանդիա	9	10	19
Ֆրանսիա	3	213	216
Այլ երկրներ	9	79	88
Ընդամենը	**1477**	**3219**	**4696**

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2007 թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 4655 հայտ:

Գրանցվել է 4475 անվանում, մերժվել է 180-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի № 289 որոշման, ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 21 թույլտվություն, որը 2006թ. համեմատությամբ 7-ով ավելի է :

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2007 թ. լազերային սկավառակներով հրապարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ № 1 (41), № 2 (42), № 3 (43) եւ № 4 (44): Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 165 գյուտի, 11 օգտակար մոդելի, 25 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1218 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների, 349 ապրանքային նշանների գրանցման գործողության եկարաձգման մասին, ինչպես նաեւ տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, գրանցված ֆիրմային անվանումների, արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

Իրականացվել է 165 գյուտի եւ 11 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների եւ հավակնության սահմանումների էլեկտրոնային ձեւի, ինչպես նաեւ 25 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը եւ հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2006 թ. «Տարեկան հաշվետվության» նախապատրաստումը եւ հրապարակումը հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով եւ դրանց էլեկտրոնային ձեւերի պատրաստումը եւ տեղադրումը ինտերնետային էջում:

Տարեկան հաշվետվություններն ուղարկվել են 26 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ:

Հրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար,

որոնք նույնպես տեղադրվել են գործակալության ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման դնելու նպատակով:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն ներկայացնելու համար պատրաստվել են 2006 թ. տեխնիկական եւ վիճակագրական հաշվետվությունները գյուտերի եւ օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան եւ Ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաեւ ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, Եվրոպական արտոնագրային գերատեսչություն եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 165 գյուտի եւ 11 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները ընթացքում են:

«CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի եւ Կանադայի արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

2007թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի եւ օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարը համալրելու նպատակով:

Շարունակվել է ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունից, BREF եւ COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը՝ Ֆրանսիայից :

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ», «Օրենքներ», «Միջազգային պայմանագրեր», «Ենթաօրենսդրական ակտեր», «Ձեւաթղթեր», «Պաշտոնական հրապարակումներ» ենթաէջերը:

Իրականացվել է «Գյուտերի եւ օգտակար մոդելների», «Ֆիրմային անվանումների» հիմնապաշարների տվյալների տեղադրումը գործակալության ինտերնետային էջում:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է վեց Intel(R) Core(TM)2 DUO տեսակի համակարգիչներով, համակարգչային օժանդակ սարքերով եւ սարքավորումներով, այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ սարքերով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները եւ բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ Մտավոր սեփականության գործակալության տեղեկատվական համակարգում:

Իրականացվել է Windows XP, Windows Vista համակարգերի եւ Microsoft office-ի տեղադրում եւ կարգաբերում, օպերացիոն համակարգի սպասարկում, համակարգչային ծրագրերի տեղադրում եւ կարգաբերում, վնասված համակարգիչների եւ ծրագրերի խնդրահարուցումների անսարքության վերացում, գյուտերի, օգտակար մոդելների, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների հիմնապաշարների տեղադրում:

Իրականացվել է Microsoft Windows Server Update Services 3.0 ծրագրի տեղադրումը և կարգաբերումը:

Գործակալության տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժինը մասնակցել է Digitec 2007 տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին:

ԼԻՑԵՆԶԱՑԻՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2007թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 95 պայմանագրեր, որոնցից 77-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 15-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2-ը՝ արտոնագրային հասարակ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2007թ. շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես մշակվել եւ սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը, որը համապատասխանեցված է TRIP`s համաձայնագրի, ինչպես նաեւ եվրադիրեկտիվների դրույթներին:

Մշակվել են նաեւ «Ֆիրմային անվանումների մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ եւ դիտողություններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ոլորտում մտավոր սեփականության գործակալությունը հիմնականում համագործակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ), ինչպես նաեւ ԱՊՀ եւ այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ:

Միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցում են ՄՍՀԿ, ԵԱԳ եւ ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին եւ որակավորման բարձրացման դասընթացներին:

Գործակալության մեկ մասնագետ մասնակցել է ԵԱԳ «Մտավոր սեփականության գնահատում» թեմայով սեմինարին, որտեղ քննարկվել են գլոբալ մասշտաբով մտավոր սեփականության գնահատման փորձին ու կիրառմանն առնչվող հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության չորս մասնագետներ երեք շաբաթով մասնակցել են Ռուսաստանի Դաշնության մտավոր սեփականության պետական ինստիտուտի կազմակերպած ուսուցողական ծրագրերին:

2007թ. գործակալության վեց մասնագետներ մասնակցել են Ժնեւում, Մյունխենում, Լոնդոնում եւ այլ քաղաքներում կազմակերպված ուսուցողական ծրագրերին, սեմինարներին եւ այլ պաշտոնական հանդիպումների:

Հեղինակային իրավունքի հարցերով երկօրյա այցով Հայաստանում էր գտնվում ՄՍՀԿ փորձագետ Մ. Ֆիչերը: Նա հանդիպումներ ունեցավ հեղինակային իրավունքի իրավատերերի, օգտագործողների եւ իրավաբանների հետ: Հանդիպումների ընթացքում հարց ու պատասխանի փուլերով քննարկվեցին ոլորտում ծագած մի շարք խնդիրներ, առաջարկվեցին լուծումներ:

2007թ. հուլիսի 3-ից 12-ը գործակալության պետի տեղակալը մասնակցել է Ժնեւում կայացած Մտավոր սեփականության եւ գենետիկ ռեսուրսների միջկառավարական կոմիտեի հերթական նիստին:

2007թ. հոկտեմբերին գործակալության պետը մասնակցել է ՄՍՀԿ գլխավոր ասամբլեայի նիստին: